ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

№ ՀՀ-ՏԿՆ-ՄՊԾ- ՇՀԱՊՁԲ- 11/1- 4 -10.09.01/35

ք. Երևան «31» հունվարի 2014թ.

ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության և « ՖԼԵԵՇ » ՍՊԸ-ի միջև 2013 թվականի դեկտեմբերի 25-ին կնքված № ՀՀ-ՏԿՆ-ՄՊԾ- ՇՀԱՊՁԲ- 11/1- 4 -10.09.01/35 ծառայությունների գնման պայմանագիրն ուժի մեջ մտնելու մասին

ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Հ. Աբրահամյանի, որը գործում է ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) և « ՖԼԵԵՇ » ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Յա. Խաչատրյանի (այսուհետև՝ Կատարող), (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածով և «25» դեկտեմբերի 2013թ. կնքված № ՀՀ-ՏԿՆ-ՄՊԾ- ՇՀԱՊՁԲ- 11/1- 4 -10.09.01/35 ծառայությունների գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.1 և 7.3 կետերով, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Պայմանագրն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 31-ից:

2. **Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է №ՀՀ-ՏԿՆ-ՄՊԾ-ՇՀԱՊՁԲ-11/1-4-10.09.01/35 ծառայությունների գնման պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայություն	«ՖԼԵԵՇ» ՍՊԸ
ք. Երևան, Հր.Քոչար 4	ք. Երևան, Եզնիկ Կողբացի 30
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011500049	Հ/Հ 15100166690902
ՀՎ ՀՀ 00259325	ՀՎՀՀ 01808789
Աշխատակազմի ղեկավար	Տնօրեն
---------- Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ	---------- Յա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀՀ ՏԿՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
N ՀՀ ՏԿՆ ՄՊԾ ՇՀԱՊՁԲ- 11/1- 4 -10.09.01/35

ք. Երևան 25 դեկտեմբեր 2013թ.

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունն, ի դեմս ծառայության աշխատակազմի ղեկավար Համբարձում Աբրահամյանի, որը գործում է ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից. «ՖԼԵԾ» ՍՊԸ, ի դեմս տնօրեն Յա. Խաչատրյան, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված <<Պրեմիում>> տեսակի բենզին (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Ապրանքի մատակարարումը սկսվում է պայմանագրի ուժի մեջ մտնելուց մինչև 2014 թվականի ապրիլի 20-ը:

1.3 Պայմանագիրն ուժի մեջ կմտնի համապատասխան ֆինանսական միջոցներ լինելու դեպքում, որի ժամանակ էլ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին:

2.2 Մեկ տեսակի գերազանցմամբ Ապրանքի հանձնումը չի ծածկում այլ տեսակի Ապրանքի թերի հանձնումը:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված ստանդարտին չհամապատասխանող Ապրանք.

ա) Պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ)Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշված քանակից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը :

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքների փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքներով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները,

3.1.8 Ընդունել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Սույն պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է սույն պայմանագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Ապրանքը Գնորդին մատակարարել պայմանագրի N 2 հավելվածով սահմանված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ) և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Առանձին փուլում թերի մատակարարում թույլ տալու դեպքում, սույն պայմանագրով նախատեսված կարգով, հաջորդ փուլում (փուլերում) լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Սույն Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի ընդհանուր գինը՝ 480000 /չորս հարյուր ութսուն հազար / ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն ներկայացված է սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածում: Գինը ներառում է Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.2 Գնի ցանկացած փոփոխություն իրականացվում է միայն կողմերի համաձայնությամբ:

4.3 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, բայց ոչ ուշ քան 20.04.2014թ. (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը

կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

5. Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. Ապրանքի հանձնման և ընդունման կարգը

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է սույն պայմանագրում նշված ծավալներով և ժամկետներում:

6.1.1 Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.2 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.3 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի, մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը, տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.4 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5%-ի չափով:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ)վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման Պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պարտավորությունների լրիվ կատարումը:

Սույն Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով

հաստատված համաձայնության: Սույն Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են օրենսդրությամբ սահմանված կարգով:

9.4 Սույն Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

Ընդ որում,պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Պայմանագրով նախատեսված ապրանքի, աշխատանքի կամ ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

9.5 Սույն Պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Պայմանագրի N1, N2, N3 և N4 հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.6 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գնորդ	**Վաճառող՝**
ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայություն	«ՖԼԵՇ» ՍՊԸ
ք. Երևան, Հր.Քոչար 4	ք. Երևան, Եզնիկ Կողբացի 30
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011500049	Հ/Հ 15100166690902
ՀՎ ՀՀ 00259325	ՀՎՀՀ 01808789
Տնօրեն Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ	Տնօրեն Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 25 » 12. *2013թ. Կնքված*
N << ՏԿՆ ՄՊԾ - ՇՀԱՊՁԲ - 11/1-4 -10.09.01/35
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Կազմածների անվանումները	*Չափման միավոր*	*Քանակը*	*Տեխնիկական բնութագիր*
Բենզին <<Պրեմիում>>	լիտր	1000	Արտաքին տեսքը՝ մաքուր և պարզ, օկտանային թիվը՝ որոշված հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 95, շարժիչային մեթոդով՝ ոչ պակաս 85, բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը՝ 45-ից մինչև 100 կՊա, կապարի պարունակությունը ոչ ավելի 5մգ/դմ^3, բենզոլի ծավալային մասը 1%-ից ոչ ավելի, խտությունը՝ 15°C, ջերմաստիճանում՝ 720-775 կգ/մ^3, ծծմբի պարունակությունը 10 մգ/կգ-ից ոչ ավելի, թթվածնի զանգվածային մասը 2.7%-ից ոչ ավելի, օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի՝ մեթանոլ-3%, էթանոլ-5%, իզոպրոպիլ սպիրտ - 10%, իզոբուտիլ սպիրտ - 10%, եռաբութիլ սպիրտ - 7%, եթերներ (C_5 և ավելի) – 15%, այլ օքսիդիչներ – 10%: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումն ըստ ՀՀ կառավարության 2004թ.նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված <<Նեիքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի>>

«Գ Ն Ո Ր Դ»

ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայություն
ք. Երևան, Հր.Քոչար 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011500049
ՀՎ ՀՀ 00259325

Աշխատանքային խմբի
ղեկավար ---------- Ա.ՍԱՀԱԿՅԱՆ
(ստորագրություն)

«Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ»

«ՖԼԵՇ» ՍՊԸ
ք. Երևան, Եղնիկ Կողբացի 30
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 15100166690902
ՀՎ 01808789

Տնօրեն ---------- Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ
(ստորագրություն)

Հավելված N 2
« 25 » 12. 2013թ. Կնքված
N ՀՀ ՏԿՆ ՄՊԾ - ՇՀԱՊՁԲ - 11/1-4 -10.09.01/35
գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ չափաբաժին	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Միավորի միջին գինը	Նախատեսվում է գնել 2014 թվականին												Ընդամենը	
				Հունվար		Փետրվար		Մարտ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	Բենզին <<Պրեմիում>>	լիտր	480			500	240000	500	240000							1000	480000
ԸՆԴԱՄԵՆԸ																1000	480000

«Գ Ն Ո Ր Դ»

ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայություն
ք. Երևան, Հր.Քոչար 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011500049
ՀՎ ՀՀ 00259325

Աշխատակազմի ղեկավար ________ Հ. ԲԱՂՐԱՄՅԱՆ
(ստորագրություն)

«Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ»

«ՖԼԵՇ» ՍՊԸ
ք. Երևան, Եզնիկ Կողբացի 30
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ [illegible]0902
ՀՎՀՀ 01608783

Տնօրեն ________ Յ. ՉԱՏՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
« 25 » 12. 2013թ. Կնքված
N ՀՀ ՏԿՆ ՄՊԾ - ՇՀԱՊՁԲ - 11/1-4 -10.09.01/35
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հ/հ	Գնման առարկայի անվանումը	Տնտեսագիտական դասակարգում	Նախատեսվում է ֆինանսավորել 2014 թվականի պետական բյուջետային միջոցների հաշվին, ընդ որում՝												
			I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			Ընդամենը
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
	Բենզին <<Պրեմիում>>	4264		240000	240000										480000
	ԸՆԴԱՄԵՆԸ		-	-	-	-	-	-							480000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

«Գ Ն Ո Ր Դ»

ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայություն
ք. Երևան, Հր.Քոչար 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011500049
ՀՎ ՀՀ 00259325

Աշխատակազմի ղեկավար ______ Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

«Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ»

«ՖԼԵՇ» ՍՊԸ
ք. Երևան, Եզնիկ Կողբացի 30
[illegible] ԲԲԸ
Հ/Հ [illegible]
ՀՎՀՀ 01808782

Տնօրեն ______ Յ.[illegible]ԶԱՏՐՅԱՆ

Հավելված N 4
<< 25 >> 12. 2013թ. կնքված
N ՀՀ ՏԿՆ ՄՊԾ ՇՀԱՊՁԲ- 11/1-4 -10.09.01/35 պայմանագրի

ԳՆՈՐԴ

ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայություն
ք. Երևան, Հր.Քոչար 4
Հ/Հ 900011500049
ՀՀ ֆն գործառնական վարչություն
ՀՎ ՀՀ 00259325

Վաճառող

«ՖԼԵՇ» ՍՊԸ
ք. Երևան, Եզնիկ Կողբացի 30
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 15100166690902
ՀՎՀՀ 01808789

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

ՀԱՆՁՆՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

<< >> << >> 2013թ.

Պայմանագրի անվանումը՝ <<Պրեմիում>> տեսակի բենզին ձեռք բերման գնման պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ << 25>> << 12 >> 2013թ.
Պայմանագրի համարը՝ N ՀՀ ՏԿՆ ՄՊԾ ՇՀԱՊՁԲ- 11/1-4 -10.09.01/35
Գնորդն՝ ի դեմս ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության աշխատակազմի ղեկավար Հ. Աբրահամյանի, և Վաճառողն՝ ի դեմս «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի տնօրեն Յա. Խաչատրյանի, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը 01. 01. 2014թ-ից մինչև 20. 04. 2014թ-ը ընկած ժամանակահատվածում մատակարարել է հետևյալ ապրանքները՝

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Մատակարարման վերջնաժամկետը	Վճարման ենթակա գումարը /ՀՀ դրամ/	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Բենզին <<Պրեմիում>>	1000 լիտր	20. 04. 2014թ.	480000	
ԸՆԴԱՄԵՆԸ				

Ապրանքների մատակարարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են

Ապրանքը մատակարարեց

_____
(ստորագրություն)

ազգանուն_____
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____
(ստորագրություն)

ազգանուն_____
Կ.Տ.